ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/50

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8524-18 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00450801/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.05.2018թ. թիվ ԴՎԱ/1638 գրության հիման վրա, 18.04.2018թ. նախաձեռնել է «Բիդեք» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.05.2018թ. թիվ ԴՎԱ/1638 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինարարական աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի հրավերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած ճանաչվեց «Բիդեք» ՍՊԸ-ն, որը սահմանված կարգով ծանուցվեց՝ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ: «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը չներկայացվեցին:

Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Բիդեք» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8524-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Ռուզաննա Հախվերդյանը և Գևորգ Ավետիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8524-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 2018թ. թիվ ԴՎԱ/1638 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.04.2018թ. նիստի թիվ 3 և 10.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Բիդեք» ՍՊԸ-ի և «Ավտոստոպ» ՍՊԸ-ի միջև 25.01.2016թ. կնքված համաձայնագիրը, «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից «Ավտոստոպ» ՍՊԸ-ին 15.05.2018թ. ուղղված գրությունը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինարարական աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Բիդեք» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

25.04.2018թ. կայացած նիստի N 3 արձանագրության 2.3 կետով Հանձնաժողովը որոշել է «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի ապահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու

հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը:

Գնահատող հանձնաժողովը 04.05.2018թ. ծանուցել է Ընկերությանը հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու մասին և առաջարկել ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը r.mardoyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

10.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ընթացակարգի հրավերի 2–րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը չեն ներկայացվել, և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմնին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Ընթացակարգի քննության նպատակով 17.05.2018թ. Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ հայտերի բացման նիստին հաջորդող ժամանակահատվածում՝ շուրջ չորս օր, Ընկերությունը զրկված է եղել համացանցային կապից, այդ իսկ պատճառով վերջինս չի ստացել Պատվիարոտուի կողմից ուղարկված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը և չի կարողացել հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել նշված փաստաթղթերը:

Որպես նշվածի ապացույց՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներակայացրեց «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից «Ավտոստոպ» ՍՊԸ-ին 15.05.2018թ. ուղղված գրությունը, որով «Յուքոմ» ՍՊԸ-ին հայտնել է, որ «Ավտոստոպ» ՍՊԸ-ի գրանցման հասցեի՝ /ք. Երևան, Սասունցի Դավիթ 87/ ծառայությունների համար տեխնիկական աջակցման բաժնում գրանցված հայտերի համաձայն՝ 03.05.2018թ.-09.05.2018թ. ընկած ժամանակահատվածում «Ավտոստոպ» ՍՊԸ-ն չի օգտվել մատուցվող ծառայություններից (խնդրի արդյունքում փոխվել է GPON սարքը):

Ընկերությունը Բողոքներ քննող անձին է ներկայացրել նաև «Բիդեք» ՍՊԸ-ի և «Ավտոստոպ» ՍՊԸ-ի միջև 25.01.2016թ. կնքված համաձայնագիրը, որով «Ավտոստոպ» ՍՊԸ-ն տվել է իր գրավոր համաձայնությունը, որ «Բիդեք» ՍՊԸ-ն օգտվի «Ավտոստոպ» ՍՊԸ-ին «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից ք. Երևան, Սասունցի Դավիթ 87 հասցեում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է Հանձնաժողովի կողմից 04.05.2018թ. ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ հայտերի բացման նիստին հաջորդող ժամանակահատվածում՝ 03.05.2018թ.-09.05.2018թ., Ընկերությունը զրկված է եղել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից /համացանցային կապից/, ինչի պատճառով չի ստացել Պատվիարոտուի կողմից ուղարկված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պայմաններում «Բիդեք» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ստանալու Հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու

մասին ծանուցումը և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնելու նշված փաստթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8524-18 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00450801/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձի

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ